ՊԱՏՄԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑԻՆ ԵՒ ԻՐ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑԸ»

Բանալի բառեր: *Յովհաննէս Դրասխանակերտցի, պատմութիւն, պատմագիր, գրող, կաթողիկոս, կերպար, աշխարհայեացք, հայրենասիրութիւն։*

Key words: *Hovhannes Draskhanakerttsi, history, historiographer, writer, catholicos, character, worldview, patriotism.*

Յովհաննէս Դրասխանակերտցին միջնադարեան այն եզակի պատմագիրներից է, որոնց կենսագրութիւնը խորապէս թափանցուած է իրենց ապրած ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական իրադրութիւնների պատմութեան մէջ։ Այս հանգամանքն, անշուշտ, պայմանաւորուած է նրանով, որ Յովհաննէս Դրասխանակերտցին եղել է հայ նշանաւոր հայրապետներից, ով, ինչպէս տեղեկանում ենք իր «Շար հայրապետացն Հայոց» *աշխատութիւնից, հայոց հոգեւոր առաջնորդ է ընտրուել Մաշտոց Եղվարդցի կաթողիկոսից յետոյ՝ 897 թուականին*[1] *և որոշակի ու վճռական դեր է ունեցել 9-րդ դարի վերջի և 10-րդ դարի առաջին քառորդի պատմական անցքերի ծաւալման մէջ։ Այդ մասին իմանում ենք նաեւ նրա* «Պատմութիւն Հայոց» *աշխատութիւնից, որը հայ հին գրականութեան եզակի կոթողներից մէկն է։*

Չնայած Յովհաննէս Դրասխանակերտցու Պատմութիւնը զգալի թուով փաստեր է պարունակում իր՝ հեղինակի կեանքի ու գործի վերաբերեալ, այսուամենայնիւ պատմիչի կենսագրութեան մի շարք կէտեր մնացել են մութ ու անորոշ։ Ամէնից առաջ ստոյգ յայտնի չէ նրա ծննդեան թուականը։ Միայն ենթադրաբար կարելի է ասել, որ նա ծնուել է 9-րդ դարի 40-50-ական թուականների սահմանում[2]*։ Իր՝ պատմագրի հաւաստմամբ՝ ծնուել է Դրասխանակերտ դաստակերտում, որը եղել էր Արտաշէսի մեծ դաստակերտը և տրուել էր քրիստոնէութիւն ընդունած Կամսարին։ Սակայն, եթէ Սամուէլ Անեցին նրա ծնունդը դնում է Դրասխանակերտում, ապա Ստեփանոս Օրբելեանն ու Կիրակոս Գանձակեցին համարում են նրան Գառնի քաղաքագիւղից, իսկ Ստեփանոս Տարօնցին (Ասողիկը)՝ Դվնից։ Իր դառն ու հալածական կեանքի համար Յովհաննէսն ստացել է* **Մաշկեալ** *մականունը։ Սակայն լինելով խոշոր պատմագիր և պատմական անցքերի փայլուն մեկնաբան, նա յաջորդ մատենագիրների կողմից աւելի շատ անուանուել է Յովհաննէս Պատմաբան։ Մանուկ հասակից Յովհաննէսը Սեւանի անապատում աշակերտել է իր ազգական և ժամանակի նշանաւոր հոգեւոր գործիչներից մէկին՝ Մաշտոց վարդապետին։ Ըստ երեւոյթին Յովհաննէսը Մաշտոցի մօտ աստուածաբանութեան, քերթողական արուեստի և այլ գիտութիւնների հետ միասին ուսումնասիրել է նաեւ հին աշխարհի գրականութիւնն ու փիլիսոփայութիւնը։*

---

[1] Տե՛ս **Աբեղեան Մ.,** Երկեր, հ. Գ., Երեւան, 1968, էջ 479։

[2] Տե՛ս **Բախչինեան Հ.,** «Էջմիածին» ամսագիր, Լ տարի, 1993, Մարտ, էջ 43։

Ուշագրաւ է այն փաստը, որ 10-րդ դարում, երբ Եւրոպայում մերժուած էր հին յունական և հելլենիստական շրջանի մշակոյթը, Յովհաննէս Դրասխանակերտցին իր Պատմութեան մէջ մի քանի անգամ յիշատակում է Հոմերոսին ու նրա «Իլիականը» և մէջբերումներ կատարում Սոլոնից[3]*։*

Գէորգ Բ. Գառնեցի կաթողիկոսի օրօք Յովհաննէս Դրասխանակերտցին՝ բարձրացած լինելով եպիսկոպոսութեան աստիճանի պաշտօնավարել է կաթողիկոսարանում։ Երբ 894 թ.-ին արաբ ոստիկան՝ Մուհամմէդ Աֆշինը նենգօրէն բանտ նետեց խաղաղութեան առաջարկով իր մօտ եկած Գէորգ կաթողիկոսին, Յովհաննէսն առաջինն էր այն հոգեւորականներից, որոնք հաւաքեցին Աֆշինի պահանջած փրկագինը և արձակել տուեցին Հայոց Հայրապետին։ Հաւանաբար հէնց նրա միջնորդութեամբ ու ջանքերով էր, որ 897 թ.-ին Գէորգ Գառնեցու մահից յետոյ կաթողիկոս ընտրուեց Յովհաննէսի ուսուցիչ և ազգական Մաշտոց Եղվարդցին։ Վերջինիս, սակայն, վիճակուած չէր երկար ժամանակ վարել Հայոց Հայրապետի պաշտօնը. եօթ ամիս անց նա վախճանւում է և 898 թ.-ին թագաւորի, իշխանների և հոգեւոր այրերի կողմից Հայոց Հայրապետ է ընտրւում Յովհաննէս Դրասխանակերտցին։ Այս մասին որոշակի փաստեր է թողել նրա ժամանակակից Թովմա Արծրունի պատմիչը. «Նրա *(Մաշտոց կաթողիկոսի –* **Յ. ՍՐԿ. Պ.***)* փոխարէն հայրապետական աթոռը ժառանգեց երանելի տէր Յովհաննէսը, որը աճել և ուսում էր առել սուրբ Մաշտոցի մօտ, նրանից հրահանգուող կրթարանում ուսմամբ լցուել, խաղցրաբարոյ և հեզահայեաց տղամարդ էր, միշտ իրեն հասարակ էր պահում, հեռու էր ամբարտաւանութիւնից, բարձրահոնութիւնից, մնում էր հեզերի աստիճանին՝ դրուատուելով մեր Փրկչից՝ Յիսուս Քրիստոսից»*[4]:

Դրասխանակերտցու կաթողիկոսութեան տարիները (898-929 թթ.) մի ժամանակաշրջան էր, երբ հայ ժողովուրդը կենաց ու մահու պայքար էր մղում պաշտպանելու համար նորերս վերականգնուած պետականութիւնը արաբական խալիֆաթի յարձակումներից։ Արաբները, չնայած ստիպուած լինելով 885 թուականին ճանաչել Հայաստանի անկախութիւնը, չէին հաշտւում սակայն Արմինիա նախկին փոխ-արքայութեան կորստի հետ, օգտագործում էին ամենաաննշան առիթն անգամ միջամտելու Հայաստանի ներքին գործերին, միմեանց դէմ հանելու հայ իշխաններին։ Բնական է, որ եկեղեցին չէր կարող անտարբեր լինել երկրի քաղաքական կեանքի այս ալեբախումներից, որոնք բարերար ազդեցութիւն չէին կարող թողնել երկրի ու ժողովրդի կեանքում։

Հայաստանի համար քաղաքական բարդ ու դժուարին ժամանակաշրջան էր. 9-րդ դարի կէսերից արաբական կայսրութիւնն սկսում է թուլանալ, 850-852 թթ. հայերի ապստամբութիւնը կարեւոր դեր է խաղում պետականութեան վերականգնման ճանապարհին Աշոտ Ա. Բագրատունին ստանում է իշխանաց իշխանի, իսկ 885 թ.՝ նաեւ թագաւորի տիտղոս։ Բայց կարճ է տեւում այդ յարաբերական անկախութիւնը, արաբները սպանում են յաջորդած Սմբատ Ա.-ին։ Այս բարդ իրավիճակում Յովհաննէս կաթողիկոսը բուռն ճիգեր է թափում երկրի կայունութեան համար։ Եուսուֆին սիրաշահելու նպատակով թանկարժէք ընծաներով գնում է նրա մօտ, վերջինս կաթողիկոսին բանտարկում է, յետոյ պահում իր մօտ՝ հայերի ոգին թուլացնելու համար։ Դրասխանակերտցին դժուարութեամբ փախուստի է դիմում, անապահով վիճակը ստիպում է նրան անցնել Աղուանք, յետոյ՝ Վրաստան։

Կաթողիկոսը լաւ էր հասկանում, որ առանց մեծ պետութեան օժանդակութեան անհնար է լուծել Հայաստանի փրկութեան հարցը։ Ուստի 914 թ.-ին, երբ Ատրպատականի ոստիկան Եուսուֆը գրաւել էր գրեթէ ամբողջ Հայաստանը և խոշտանգելով

---

[3] Նոյն տեղում:

[4] **Թովմա Արծրունի և Անանուն,** Պատմութիւն Արծրունեաց տան, Երեւան, 1985, էջ 377:

սպաննել Սմբատ արքային, երբ երկիրը հեծեծում էր սովից ու բնական աղէտներից, նա վճռում է մի աղերսական թուղթ գրել բիւզանդական կայսր Կոստանդին Ծիրանածնին (913-959 թթ.)։ Կաթողիկոսը խնդրում է կայսրին, որպէսզի վերջինս հայոց թափուր գահի վրայ հաստատի Սմբատի որդի Աշոտին և զէնքով աջակցի հաւատակից հայերին։

Յովհաննէս կաթողիկոսի այս նամակը Միքայէլ Չամչեանը դիտել է որպէս Դրասխանակերտցու քաղկեդոնական տրամադրութիւնների արտայայտութիւն։ Նրան հետեւելով այս տեսակէտին յարեցին նաեւ Գաբրիէլ վարդապետ Այվազովսկին և ֆրանսիացի բանասէր Ֆելիքս Լաժարը։ Սակայն ժամանակին Չամչեանի այս ոչ գիտական պնդումը հիմնովին քննադատուեց ինչպէս հայագէտ Մկրտիչ Էմինի, այնպէս էլ Միքայէլ Նալպանտեանի կողմից, որոնք մերկացրին այս հարցում Մխիթարեան պատմագրի անձնական մօտեցումը։ Իրականում, ըստ Լէօյի, այս նամակում, որը «սկզբից մինչեւ վերջ բաղամական մի գրութիւն է», Դրասխանակերտցին ոչ մի բացայայտ կամ քօղարկեալ միտում չի դրսեւորել յօգուտ քաղկեդոնութեան։ Աւելին, շեշտը դնելով հաւատի միասնութեան վրայ, նա ձգտել է խուսափել դաւանաբանական տարբերութեան ակնարկումից[5]։

Որպէս կաթողիկոսի նամակի պատասխան կայսրը մարդ է ուղարկում Հայաստան իր մօտ՝ Կ. Պոլիս հրաւիրելու կաթողիկոսին և արքայորդի Աշոտին։ Շատ լաւ իմանալով նման այցելութեան դաւանաբանական-քաղաքական վտանգը՝ դիւանագէտ կաթողիկոսը հրաժարւում է գնալուց, որպէսզի տկարամիտներին գայթակղութիւն չպատճառի, թէ յարակցում է քաղկեդոնականներին։ Արքային ուղեկցում է մինչեւ Տարօն, ետ գալիս Դերջան, ապա գնում է Մանեայ այր, այցելում է Սեպուհ լեռան ճգնաւորներին, որոնց հետ ապրում է ինն ամիս և դժկամութեամբ թողնելով ճգնաւորական կեանքը՝ վերադառնում է Դվին[6]։ Նրա փոթորկալից կեանքի խռովքը դեռ երկար է շարունակւում. Նըսբր ոստիկանից խոյս տալով՝ առանձնանում է նախ Գեղայ բերդում, յետոյ՝ Սեւանայ կղզում, գնում է Բիւրական, յետապնդող արաբները այստեղ կոտորում են շատ հայերի, կաթողիկոսը ստիպուած հեռանում է Բագարան, արտաքին վտանգի ու ներքին պառակտումների լարուած վիճակը պատճառ են դառնում, որ նա ընդառաջի Գագիկ Արծրունու առաջարկին և մեկնի Վասպուրական և հաստատուի Աղթամարում (Յիշենք Մուրացանի «Գէորգ Մարզպետունի» վէպի Յովհաննէս կաթողիկոսի կերպարը)[7]։ Այդ թուականից ի վեր հայոց կաթողիկոսների նստավայրը դառնում է Աղթամարը։ Այստեղ էլ հէնց Յովհաննէս Դրասխանակերտցին, ըստ երեւոյթին, Աշոտ Շապուհեանի և Գագիկ Արծրունի թագաւորների առաջարկով շարադրում է իր տագնապեալ Պատմութիւնը։

Լէօն «լալահառաչ պատմութիւն» է համարել Յովհաննէս Դրասխանակերտցու գործը[8]։ Սմբատ Ա. թագաւորի (891-915 թթ.) մահուան, Աշոտ Երկաթի մղած դիւցազնական կռիւների, Եուսուֆի արշաւանքների և արաբ ոստիկանների աւերածութիւնների ու աւարառութիւնների էջերում, Դրասխանակերտցին նկարագրում է սովի, գաղթի, կոտորածի ու թշուառութեան տեսարաններ, որոնք մարդկային կեանքի ողբերգութեան առանձին հոգեվիճակներ են՝ դառն ու նսեմացուցիչ։

Քանի որ Դրասխանակերտցին իր Պատմութիւնը գրել է շատ կարճ ժամանակամիջոցում և ծերութեան հիւանդութեան մէջ, ուստի այն կրում է որոշ հապճեպութեան կնիք։ Այս բանը նկատելի է մանաւանդ Պատմութեան այն մասում, որտեղ պատմիչը

---

[5] Տե՛ս **Բախչինեան Հ.,** «Էջմիածին» ամսագիր, Լ տարի, 1993, Մարտ, էջ 43։

[6] **Աբեղեան Մ.,** Երկեր, հ. Գ., Երեւան, 1968, էջ 481։

[7] **Սաֆարեան Վ.,** Հայ միջնադարեան գրականութիւն, Ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատ. Երեւան, 2016, էջ 147։

[8] **Լէօ,** Հայոց Պատմութիւն, հտ. 2, Երեւան, 1947, էջ 588։

նկարագրում է Հայաստանի վաղ անցեալի պատմական եղելությունները։ Նրա Պատմությունը գլուխների բաժանուած չէ, բայց պայմանականօրէն կարելի է երկու մաս տեսնել. առաջինը հետեւելով Մովսէս Խորենացուն, Դրասխանակերտցին ձգտել է գրել մի ամբողջական հայոց պատմություն, սկսելով Յաբեթի սերունդների ազգաբանությունից, որի հետ նա կապում է հայ ժողովրդի ծագումը, հնագոյն առասպելներից, նախորդներին խիստ համառօտելով՝ հասցնում մինչեւ 9-րդ դարի կէսերը, որից յետոյ, որպէս ականատես, գրում է մանրամասն ու գեղարուեստօրէն, աւարտում 924 թուականով։

Պատմությունն ունի փոքրիկ առաջաբան, թէեւ հեղինակը ժամանակի սղությունից և իր գործն անաւարտ թողնելու մտավախությունից դրդուած չի ցանկացել զուր տեղը առաջաբանի վրայ ժամանակ վատնել. «Եւ արդ, մի՛ եւս ինձ այլ յիրս յառաջաբանութեանս եղիցի ծախել զժամանակս. վասն զի ծերութիւն ցաւագին՝ մահ առ դուրս պատրաստ ունի, եւ տագնապ տարակուսիցս հապճեպ տայ պատմել զանցս անցից աղետիցս եւ անհնարին խռովութեանց հասելոց կալելոց զմեզ։ Արդ այսուհետեւ յարահետ եւ յաղխատիմաց խանթէ իմոցս մտաց յառաջ ձգեցից բան երագագիր դպրի գրչութեամբ. եւ նախ՝ զգրովք հարցն եկեալ՝ ըստ նախապատում նոցայն հանդիսի ծանօթս կացուցից, սակաւուք ինչ զնախնական սփոռումն բոլոր ազգաց եւ ազանց, որ յորդոցն Նոյի՝ եւ ապա զմերն Յաբեթ...»[9]։ *Յիշեալ տողերում արդէն ուրուագծւում է նաեւ երկրի ճակատագրով մտահոգուած հեղինակ-պատմիչի կերպարը, որը մարդկայնօրէն ապրել է հայրենի երկրի ծանր դրաման, տագնապել նրան պատուհասած ներքին խռովություններից ու աղէտներից։*

Հին շրջանի դէպքերը պատմագրելիս Դրասխանակերտցին որպէս աղբիւր ընտրել է 5-րդ դարի պատմիչներից յատկապէս Ագաթանգեղոսի, Մ. Խորենացու և Եղիշէի մատեանները, իսկ յետագայ շրջանի պատմագիրներից օգտագործել է Սեբեոսի, Ղեւոնդի, Մովսէս Կաղանկատուացու և Շապուհ Բագրատունու վկայությունները։ Դրասխանակերցու Պատմութեան այս հատուածը ունի ճանաչողական ու աղբիւրագիտական մեծ արժէք։ Անցեալի այս կամ այն գործչի մասին խօսելիս նա մեծ չափով օգտագործել է ժողովրդական անգիր զրոյցներ։ Այս տեսակէտից նրա Պատմությունը շատ հետաքրքիր ու արժէքաւոր վկայություններ է պարունակում նախորդ շրջանի մատենագիրներից ու հոգեւոր գործիչներից յատկապէս Յովհան Մայրագոմեցու, Եզրի, Յովհան Օձնեցու և տակաւին անյայտ պատմագիր Շապուհ Բագրատունու մասին[10]։

Սակայն պատմագիտական ինչպէս նաեւ գրականագիտական առումով անգնահատելի արժէք է ներկայացնում Դրասխանակերտցու մատեանի երկրորդ մասը, որտեղ նկարագրւում են պատմիչի ժամանակակից, այսինքն՝ 9-րդ դարի երկրորդ կէսի և 10-րդ դարի առաջին քառորդի պատմական իրողությունները։ Այստեղ Դրասխանակերտցին, մեծ մասամբ որպէս ականատես, մանրամասնօրէն շարադրում է հայկական նոր-նոր վերականգնուած պետականության և մեր ժողովրդի ու եկեղեցու անկախության պահպանման համար մղուած համաժողովրդական պայքարի պատմությունը։ Հաճոյքով պատմում է Աշոտ Ա.-ի ժամանակ ձեռք բերուած ինքնուրոյնության մասին, դա համարում ոչ միայն աստուածային շնորհների, այլեւ Աշոտի մէջ «ներքին մարդու» կենսաւուժի արդիւնք։ Եւ նրա մահն էլ «բարւօք ծերությամբ» խաղաղ վախճան էր, որը դժբախտաբար չունեցաւ նրան յաջոր-

---

[9] **Դրասխանակերտցի Յ.,** Հայոց Պատմություն, ԵՊՀ-ի հրատարակչություն, Երեւան, 1996, էջ 8։ Գրաբարաշխարհաբար զուգադիր հրատարակություն։

[10] Աշոտ Բագրատունու ու նրա ժամանակի պատմության համար Յ. Դրասխանակերտցին որպէս սկզբնաղբիւր յիշատակում է ոմն Շապուհ Բագրատունու գիրքը, տե՛ս **Դրասխանակերտցի Յ.,** Հայոց Պատմություն, Երեւան, 1996, էջ 11։ Այդ գիրքը յայտնաբերուած չէ, և վերջինիս բովանդակության վերաբերեալ գաղափար կարելի է կազմել միայն Յ. Դրասխանակերտցու շնորհիւ։

դած Սմբատ Բագրատունու փոթորկալից կեանքը։ Նախապէս պատմիչը նոյն հպարտութեամբ է խօսում երկրի բարձրացող հեղինակութեան ու շէնութեան մասին, և Սմբատի կերպարի մէջ ընդգծւում են խելոք դիւանագէտի, ճկուն գործչի յատկանիշներ։ Նրա իշխանութեան տակ են միաւորւում Մեծ Հայքի բոլոր կողմերը, բացի Աղձնիքից, նա կարողանում է բարեկամութիւն հաստատել Վրաստանի հետ, խաղաղ յարաբերութիւններ վերականգնել Եուսուֆ ոստիկանի հետ, այնքան, որ սա բազմաթիւ ընտիր զարդեղէնով «երեւելի զգեստս արքունական ոսկեճամուկս եւ շղարշատես հրաշանկարս միանգամայն առաքէ ի պատիւ մեծարանաց արքային Սմբատայ»[11]։ *Պատմիչը յետոյ գոհունակութեամբ աւելացնում է նաեւ, թէ՝* «բայց եւ ես, որ զայս գրեցի, պատուեցայ պատուասիրաբար յոստիկանէն զգեստուք ըստ օրինի կարգիս. եւ ջորի պանուճաբար ոսկեզօծ զարդուք առաջի մատուցանելով ինձ»[12]։ *Այս պայծառ տրամադրութիւնը շարունակւում է խաղաղ երկրի ծաղկուն կեանքը պատկերելիս. բոլորը հանգիստ բնակւում են իրենց ժառանգական կալուածներում ու տներում, տնկում այգիներ,* «արմատացուցին բուրաստանս ձիթենեաց եւ պարտիզաց. հերկեցին հերկս արտաքոյ փշոց եւ կթեցին պտուղս հարիւրատրս. զեղան շտեմարանք ցորենոյ ի ժամանակի լրութեան հնձոց. լցան գուբք գինւոյ ի կութս այգեստանաց եւ լերինք ցնծութիւն զգեցան... առհասարակ բղխէր աղբիւր բարեաց»[13]։

Բայց խաղաղութեան ու շէնութեան մղուած պատմիչի աշխարհայացքն ու ոճամտածողութիւնը մթին երանգներ է ստանում, քանի որ երկար չի տեւում այս բարեբախտ վիճակը, և կրկին սկսում են գործել նախարարական ինքնակործան երկպառակութիւնները։ Սմբատի բանիմաց ու հերոսական նկարագրին խառնւում են ողբերգական շերտեր, կերպարը գեղարուեստօրէն ամբողջանում է իր մարդկային տեսանելի նկարագրով, որը իւրովի խորհրդանշում է երկրի ու ազգի վիճակը։ Սմբատը ստիպուած է լինում իր ոյժը պահելու համար բարեկամութեան փորձեր անել Բիւզանդական կայսրութեան հետ։ Իսկ իշխանների դաւերն ու կռիւները սրւում են, ելնում են Սմբատի ու միմեանց դէմ, իրարից բերդեր ու կալուածքներ խլում, աւերում, Սմբատին գրգռում սրա կամ նրա դէմ, երբեմն նոյնիսկ թշնամիների կողմն անցնում թագաւորի տիտղոս ստանալու համար, որը ցրելու առումով արաբները, ինչպէս հասկանալի է, բոլորովին ժլատ չէին։ Պարզ է, որ այս վիճակը պիտի օգտագործէր Եուսուֆ ոստիկանը, մոռանար «բարեկամութիւնը», նոր ասպատակութիւններ սկսեր, անասելի չափերի հասցներ հարկերը։ Եւ այս ամէնի մէջ աւելի է ընդգծւում Սմբատի կերպարի ողբերգական շեշտը, որի ամփոփումն է նրա տմարդի ձերբակալումն ու տանջալի մահը[14]։ Դրասխանակերտցին, այսպիսով, երկրին, ազգին ու նաեւ թագաւորին հասած օրհասների մէջ արտաքին վտանգից աւելի կործանարար է համարում ներքին անմիաբանութիւնը։ Եւ կաթողիկոս պատմիչը, բնական է, որ ճիշդ էր գնահատելու եկեղեցու դերը, որը միշտ մնում է միակ միաբանող ոյժը։ Խոր ցաւ էր ապրում, տեսնելով, թէ ինչ աւերածութիւններ էր կրում Հայաստանը իշխանների ու թագաւորի միջեւ ծագած վէճերի, անմիաբանութեան ու ազգային համընդհանուր գիտակցութեան պակասութեան պատճառով[15]։ Ինքը՝ Դրասխանակերտցին, խաղաղարար միջնորդութեամբ ոչ միայն յաճախ դիմել է թշնամիներին ու հարեւաններին, այլեւ դժուարին ճիգեր արել հայ նախարարների եղբայրասպան կռիւները դադարեցնելու ուղղու-

---

[11] **Դրասխանակերտցի Յ.,** Հայոց Պատմութիւն, ԵՊՀ-ի հրատարակչութիւն, Երեւան, 1996, էջ 200։ Գրաբարաշխարհաբար զուգադիր հրատարակութիւն։

[12] Տե՛ս նոյն տեղում։

[13] Տե՛ս նոյն տեղում, էջ 202։

[14] **Սաֆարեան Վ.,** Հայ միջնադարեան գրականութիւն, Ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատ. Երեւան, 2016, էջ 150-151։

[15] **Մաթեւոսեան Ռ.,** Հայոց եկեղեցու սրբերը և սրբակենցաղ անձինք, Ս. Էջմիածին, 1999, էջ 166։

թեամբ. բայց մեծ լարումով ձեռքբերած խաղաղությունը միշտ կարճ է տեւել։ Նա հետեւողականօրէն անարգանքի սիւնին է գամել բոլոր նրանց, ովքեր գործակցել են օտար նուաճողներին ու բռնակալներին, ուրացել իրենց հաւատը։ Վերջիններիս համար ոչնչացնող ատելութեամբ գրել է. «Ազատ մարդիկք այնպէս ուրացութեամբն ձաղկեալք եւ հասեալք ի խոր աղքատութիւնս, մինչեւ ի դրունս տնանկաց շրջել եւ հաց մուրանալ՝ եւ միայն զկորստական մոլորութեանն եւ անարգութեանն անուն ժառանգեալք։ Եւ ոչ գտաւ խոստովանութիւն ի շրթունս նոցա. իջին ի դժոխս անհնարին դառնութեամբ՝ առիթք գտեալք հրոյն գեհենի»։ *Եւ ապա ընդօրինակելով Եղիշէին՝ Դրասխանակերտցին էլ իր նախորդի նման նզովք է կարդում դաւաճաններին*[16]. «Եւ այս գրեալ եղեւ յինէն ի կշտամբութիւն յանդիմանութեան այնոցիկ, որք խորհին ցանկացողք զործոց նոցա լինել»[17]։

Դրասխանակերտցին Խորենացու նման երազում է բանականութեան թագաւորութիւն։ Ողջամտութիւն, ահա ըստ պատմիչի, սա պիտի ուղեկից լինի քաղաքական գործչին՝ լինի նա թագաւոր, իշխան, թէ հոգեւոր առաջնորդ։

Ահա, Աշոտ Երկաթը սոսկալի կերպով վրէժխնդիր է լինում հօր եղերական մահուան համար, կարողանում է վերականգնել երկրի խաղաղ վիճակը, հիմնաւորել Հայոց թագաւորութեան հաստատումն ու կայունութիւնը, Հայաստանը փաստացի ազատում է արաբական գերիշխանութիւնից։ Աշոտ Երկաթի կերպարին եւս բնորոշ են մնում քաջահմուտ ռազմագէտի, խիզախ զօրականի և խելոք դիւանագէտի յատկութիւնները։ Բայց կրկին գործում է հայոց ինքնասպանութեան յաւերժական լիցքը՝ անմիաբանութիւնը։ Յաճախ արտաքին օբյեկտիւ դրդապատճառները քննաբար դիտելով և ճիշդ գնահատելով՝ Դրասխանակերտցին քրիստոնեայ-միջնադարեան աշխարհայեցողութեան պահանջով հակում է նաեւ որոշ դէպքերի հիմքը տեսնելու անհատի անձնական թերութիւնների մէջ, ներանձնականացնելու դրանք։ Աշոտ Երկաթի կերպարում դա երեւում է հետեւեալ դրուագում. Աշոտը, «բղջախոհութիւն»-ից դրդուած, յաճախ էր լինում Յլիկ Ամրամին պատկանող Ուտիքում, և «հոյակապ իշխանն մեծ Սահակ *(Սեւադա)*, որ որդիացուցեալն էր փեսայութեամբ զթագաւորն Աշոտ», ոմանց «չարախորհուրդ բան»-*երից* «հրապուրեալ», *թագաւորի դէմ սկսում է չարիք գործել՝ որպէս օտար թշնամու,* «եւ իբրեւ սառնամանիք ցրտութեան ձմերայնոյն ի բաց եղաւ, ապա երկաթանչիւրք նոքա զօրաժողով լինէին ի մարտ ընդ միմեանս պատերազմել»[18]։ *Նոյնպէս և Յլիկ Ամրամը, ենթարկուելով ներքին մոլորութիւններին,* «չարիմացութեամբ ի մութ թաթաւեալ»՝ *դուրս է գալիս թագաւորին հնազանդուելուց և* «լքեալ խոտեալ անարգեալ զբնիկ տէրութիւն իւր»՝ *ծառայութեան է մտնում* «անբնիկն» *աբխազ Գուրգէնի մօտ*[19]։

Դրասխանակերտցին միակն է, որ որոշ ուշագրաւ վկայութիւններ է թողել Գէորգ հայրենասէր իշխանի մասին, որը Մ. Զամչեանի կողմից քմահաճօրէն մկրտուել է Մարզպետունի տոհմանունով և որը դարձել է հայ դասական արձակագիր Մուրացանի յայտնի պատմավէպի կենտրոնական դէմքը։

Դրասխանակերտցու Պատմութիւնը աւարտւում է մի տեսակ ողբով, որտեղ հեղինակը յուսադրում է իր ժողովրդին, քաջալերում՝ պահպանելու կրօնը, լաւ բարքերն ու միաբանութիւնը։

Ինչպէս նկատեցինք վերը շարադրուածից, անընդհատ գործողութիւնների մէջ հանդէս եկող Դրասխանակերտցի կաթողիկոսը իր Պատմութեան մէջ մեզ ներկայանում է ոչ միայն իբրեւ իր կողմից նկարագրուող բազմաթիւ դէպքերի ականատես ու

---

[16] Տե՛ս **Եղիշէի** Պատմութեան եօթերորդ եղանակում, ինչ որ նա ասում է Վասակի մասին, Երեւան, 1989, էջ 283։

[17] **Դրասխանակերտցի Յ.,** Հայոց Պատմութիւն, ԵՊՀ-ի հրատարակչութիւն, Երեւան, 1996, էջ 256, 258։ Գրաբարաշխարհաբար զուգադիր հրատարակութիւն։

[18] Նոյն տեղում, էջ 308։

[19] Նոյն տեղում, էջ 320։

վկայ, այլեւ յաճախ հանդէս է գալիս սեփական ապրումներով, խորհրդածութիւններով, որոնք նրա անձնաւորութեանը տալիս են գրական կերպարի արժէք և ստեղծում առանձնակի բնաւորութիւն։ Բայց դա ամենեւին էլ առիթ չի տալիս եզրակացնելու, թէ նա գրել է ինքնակենսագրութիւն։ Քաղաքական անցքերին մասնակցած կաթողիկոսը ձգտել է աւելի շոշափելի ու կենդանի ներկայացնել իր ժամանակաշրջանը, բայց նա երբեք այդ ամէնն իր շուրջը չի ծաւալել և ամենեւին էլ նպատակ չի ունեցել գրի առնել իր կեանքի պատմութիւնը։ Եւ ճիշդ է նկատուած, որ «Գիրքին ընթերցումը աւելի վիպական գործի մը տպաւորութիւնը կը ձգէ՝ քան պատմա-քննական երկասիրութեան», *և դա շնորհիւ այն բանի, որ հեղինակը իր նկարագրած դէպքերի ու իրադարձութիւնների մէջ* «գիտէ ալ դնել զգացում և սիրտ»[20]: *Նա գրաւում է ընթերցողին իր անկեղծ ներշնչանքով, վառ հայրենասիրութեամբ և ազդեցութեան մեծ ոյժով։*

Ըստ Լէօյի, արժանահաւատութեան տեսակէտից Դրասխանակերտցին չափազանց բարձր է կանգնած միջնադարեան շատ ու շատ պատմիչներից, օրինակ նոյն 10-րդ դարի պատմագիր Թովմա Արծրունուց, որի համեմատ նա ունի շատ աւելի «անկախութիւն ու անաչառութիւն»։

Դրասխանակերտցու Պատմութեան խոցելի կողմը տարեթուերի պակասն է, նրա բերած հատուկենտ թուականներն էլ չունեն պատմական ստուգութիւն։ Բայց, այսուհանդերձ այդ պակասը հիմնականում չի խաթարում նրա Պատմութեան ճանաչողական մեծ արժէքը։ Նրա ճիշդ մեկնաբանութեամբ, հայ աւատատէրերի եղբայրասպան կռիւներից ոչ միայն օգտւում էին օտար աւերիչները, այլեւ մեծապէս ճնշւում էին ռամիկները, որոնք վերածւում էին ռազմական աւարի և մի իշխանից անցնում միւսին։ Այդ պատճառով նրանք ըմբոստանում էին իրենց տէրերի դէմ, և այդպիսով ջլատւում էր երկիրն ու կորցնում թշնամուն դիմադրելու ունակութիւնը։ Այս ամէնը լաւ էր գիտակցում նա, բայց երբ ձգտում էր նոյնը հասկացնել նաեւ հայ մեծամեծներին, այնժամ, ցաւով նկատում է պատմիչը և Սաղմոսերգուի խոսքով ասում. «նոքա մարտնչէին ընդ իս»[21]:

Պատմութեան վերջաբանում («Բան ինքնուրոյն սակս յիշատակի անուան իւրոյ»*), որն իրականում պատմիչի ինքնագիր յիշատակարանն է, դիմելով հայոց տէրերին, Յովհաննէս Պատմաբանը խորհուրդ է տալիս նրանց* «իբրեւ զմի այր միանալ» *և լսել* «զբաղանայնութեան *(միաբանութեան –* **Յ. ՍՐԿ. Պ.***)* խրատին»[22]:

Դրասխանակերտցու էութիւնը բացայայտւում է նաեւ իր գործի խօսքի կոլտուրայի, բառընտրութեան, կառուցուածքի, այլ խօսքով՝ ոճի մէջ. նա զգացմունքային է և պերճախօս, նա ոչ թէ պատմում է դէպքերը, այլ ապրում է դրանցով, գնահատում է փաստերը, յուզւում, քննադատում ու այպանում հարուստ ու ճոխ գրաբարով. «Նրա ոճը ճարտասանական է, արտայայտիչ դարձուածքներով լեցուն, որը տպաւորիչ է դարձնում բնորոշումներն ու կողմնակի շեղումները»[23],- *գրում է գրականագէտ Սրբուհի Հայրապետեանը։ Հակադրուելով այն ժամանակ արդէն տարածում գտած «գեղջուկ բանիւ» ոճին, նա ստեղծագործել է քերթողական արուեստով և մեծ չափով հիմնուել Ոսկեդարի հայ մատենագիրների լեզուաոճական հրահանգների վրայ։ Ըստ այդմ, ինչպէս նկատել է Մանուկ Աբեղեանը[24], նրա ոճը ձեռք է բերել որոշ նմանողական*

---

[20] **Քիպարեան Հ. Կիւրեղ Վրդ.,** Պատմութիւն հայ հին գրականութեան, Վենետիկ, 1992, էջ 295:

[21] Գիրք Սաղմոսաց Դաւթի, Սաղմոս ԾԵ., ի տպարանի Առաքելական Աթոռոյս Ս. Յակոբեանց, յԵրուսաղէմ, 1870, էջ 141:

[22] **Դրասխանակերտցի Յ.,** Հայոց Պատմութիւն, ԵՊՀ-ի հրատարակչութիւն, Երեւան, 1996, էջ 362: Գրաբարաշխարհաբար զուգադիր հրատարակութիւն:

[23] **Հայրապետեան Ս.,** Հայոց հին և միջնադարեան գրականութեան պատմութիւն, Անթիլիաս-Լիբանան, 1988, էջ 302:

[24] **Աբեղեան Մ.,** Երկեր, հ. Գ., Երեւան, 1968, էջ 485:

յատկութիւններ։ Արհամարհելով իր ժամանակի խօսակցական լեզուն, նա ցանկացել է նմանուել 5-րդ դարի մատենագիրներին, ձգտելով սեփականել նրանց գրելաձեւը և մտածելակերպի ինչ-ինչ կողմեր։ Եւ դա ոչ միայն ժամանակի ընդհանուր մտայնութեան ու ճաշակի արտայայտութիւնն էր, այլեւ մեծ չափով բխում էր այն հանգամանքից, որ Դրասխանակերտցին իր աշխարհայացքով, քաղաքական համոզմունքներով ու իտեալներով մօտ էր կանգնած 5-րդ դարի պատմիչներին՝ Եղիշէին ու Խորենացուն։ Սակայն նմանուելով հանդերձ, Յովհաննէս Դրասխանակերտցին ամբողջապէս չի մնացել նրանց ազդեցութեան ոլորտում, այլ շատ յաճախ դրսեւորել է ինքնուրոյն ու անկախ մտածողութիւն և գեղեցիկ ու յուզական պատկերներ։ Դրանց շնորհիւ նրա Պատմութիւնը ձեռք է բերել գեղարուեստական խոր հագեցուածութիւն և ստացել գրական ստեղծագործութեան մի շարք յատկանիշներ[25]*։*

Այսպիսով՝ Յովհաննէս կաթողիկոս Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց»-ը, որ հայ հին գրականութեան փայլուն յուշարձաններից մէկն է, առանձնանում է ոչ միայն իր գիտական արժէքով՝ հանդիսանալով Սմբատ Առաջին Բագրատունի թագաւորի և նրա որդի Աշոտ Երկրորդի ժամանակաշրջանի վերաբերեալ ընդարձակ տեղեկութիւններով ամենագլխաւոր աղբիւր, այլեւ իբրեւ մի իսկական գրական գործ, որ վկայում է հեղինակի մտաւոր կարողութիւնը։ Յենուելով պատմագրի դատողութիւնների, խորհրդածութիւնների, հերոսներից իւրաքանչիւրի նկատմամբ ունեցած նրա վերաբերմունքի վրայ՝ մենք պատկերացում ենք կազմում նաեւ հէնց իր՝ հեղինակի անհատականութեան, նրա աշխարհայացքի, մտածելակերպի մասին, որովհետեւ Պատմութեան մէջ արտայայտուած մտքերն ու զգացմունքները և արտայայտած ոճը բնորոշում են հեղինակի միտքը, սիրտը և բնաւորութիւնը։

Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոցը» ի շարս այլ յայտնի հայ պատմիչների՝ Մովսէս Խորենացու, Եղիշէի, Կորիւնի, Ղազար Փարպեցու, Ագաթանգեղոսի և այլոց, ընդգրկուած է «Մեծ պատմաբանները Անտիկ դարաշրջանից մինչեւ 1800 թ.» *ամերիկեան հեղինակաւոր հանրագիտարանային հրատարակութեան մէջ*[26]*։*

Յ. ՍՐԿ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑԻՆ ԵՒ ԻՐ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑԸ»

Ամփոփում

Յօդուածում ցոյց է տրւում, որ Յովհաննէս Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոցը», լինելով հայ հին գրականութեան փայլուն յուշարձաններից մէկը, առանձնանում է ոչ միայն որպէս պատմագիտական բարձրարժէք աշխատութիւն, այլեւ իբրեւ մի իսկական գրական գործ, որում նկարագրուող իրադարձութիւնները, պատմական դէմքերը, դէպքերի զարգացման ընթացքը ներկայացւում են հեղինակային «ես»-ի տեսանկիւնից, նրա բնորոշմամբ ու գնահատմամբ, որոնց միջոցով բացայայտւում է նաեւ երկրի ճակատագրով մտահոգուած պատմագրի գեղարուեստական կերպարը։

---

[25] **Բախչինեան Հ.,** «Էջմիածին» ամսագիր, Լ տարի, 1993, Մարտ, էջ 47:

[26] **Maksoudian K. H.,** Yohannes Drasxanakertc'I, Grat Historians from Antiquity to 1800. An International Dictionary, Lucian Boia, Editor-in Chief, New York, Westport, Connecticut, London, 1989, p. 19.

DC. H. PETROSYAN

HOVHANNES DRASKHANAKERTTSI AND HIS HISTORY OF ARMENIA

Summary

The present article touches upon the "History of Armenia" of Hovhannes Draskhanakerttsi, as being one of the brilliant memorials of the old Armenian literature, excels not only as a valuable historical work, but also as a genuine literal work. The events, historical figures, courses of the incidents depicted in that book are introduced from the point of view of the author himself, by his characterization and assessment, through which the artistic character of the writer, who is concerned with the destiny of the country, is also revealed.

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Մշակոյթը այն պարանն է որով կարելի է միաժամանակ փրկել խեղդուողը և կամ խեղդել մէկը։ Եթէ մշակոյթի զարգացումը կարելի է օգտագործել յօգուտ բարիին, նոյնպէս ալ կարելի է գործածել զայն չարին համար։

Անկասկած՝ ճշմարիտ կեանքը ապրուած կրօնքն է, ա՛յն՝ որ արդիւնք է հոգիի և իմացականութեան ազնուագոյն ճիգերուն։

Թող տարօրինակ չթուայ հետեւեալ ճշմարտազանցութիւնը, լեցուն և կատարեալ կեանք մը կրնայ բխիլ միայն ամբողջական... ունայնութենէ. ինչպէս լռութենէն՝ երգը, իսկ գերեզմանէն՝ կեանքը։

Անկասկած մեր բոլոր աղօթքները ունին իրենց պատասխանները, սակայն այն աղօթքները որոնք աւելի արագ կը պատասխանուին ուրիշներու հանդէպ մեր հասկացողութիւն ցոյց տուած աղօթքներն են։

Մաքուր սիրտը կրնայ որեւէ բան իրագործել։ Եթէ հարց տաք թէ ի՞նչ կ՚ընէ տիեզերքը, քաջ գիտցէ՛ք որ ան լուռ կ՚ունկընդրէ մեր մէն մի ցանկութիւնը։

Անմեղութիւնը՝ անվերապահօրէն սէր տալու և ստանալու կարողութիւնն է։

Զգո՛յշ, միտքեր կրնան վերածուիլ խօսքերու, խօսքեր՝ գործերու, գործեր՝ սովորութեանց, սովորութիւններ՝ նկարագրի, և նկարագիրը կրնայ դառնալ ճակատագիրդ։